

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Միքայել Մալխասյան (խմբագիր, պ.գ.թ., դոց.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ., ասիստ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Микаэл Малхасян (редактор, к.и.н., доц.), **Ашот Мелконян** (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н., асист.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Mikayel Malkhasyan (Editor, PhD in History, Associate Prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History, Assistant Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Виген Цатрян, Руслан Кобзарь - К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ И ЭТИМОЛОГИИ БАСОРОПЕДЫ В СВЕТЕ ЗАВОЕВАНИЙ АРТАШЕСА I У МИДЯН	7
Վիգեն Ծատրյան, Ռուսլան Կոբզար - ԲԱՍՈՐՈՊԵԴԱՅԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՏՈՒԳԱ-ԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՄԵՂԱԿԱՆ ԵՎ ԱՃՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒՆ.....	22
Vigen Tsatryan, Ruslan Kobzar - TO THE QUESTION OF THE LOCALIZATION AND ETYMOLOGY OF BASOROPEDA IN THE LIGHT OF THE CONQUESTS OF ARTASHES I FROM THE MEDES.....	22
Արգիշտի Վարդանյան - ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՈՂՄԱՃՅՈՒՂԻ ՄԻ ՃՇՁԳՐՏՈՒՄ.....	23
Аргишти Варданян - ОДНО УТОЧНЕНИЕ ПРАВЯЩЕЙ ДИНАСТИИ МАМИКОНЯНОВ	29
Argishti Vardanyan - A CORRECTION OF THE GENEALOGY OF THE MAMIKONYANS PRINCELY FAMILY	29
Միքայել Մալխասյան - 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՉԱՄԻՎՈՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ.....	30
Микаэл Малхасян - ОБЩАЯ КАРТИНА РАСПРЕДЕЛЕНИЕ НАСЕЛЕНИЯ В АРМЕНИИ В XVI ВЕКЕ НА ПРИМЕРЕ ОТДЕЛЬНЫХ АДМИНИСТРАТИВНЫХ ЕДИНИЦ.....	38
Mikayel Malkhasyan - GENERAL PICTURE OF POPULATION DISTRIBUTION IN ARMENIA IN THE 16 TH CENTURY ON THE EXAMPLE OF SEVERAL ADMINISTRATIVE UNITS.....	38
Ֆելիքս Մովսիսյան - «ՄԱՍՅԱՑ ԱԴԱՎՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ ՀՈՈՍԻ ՊԻՈՒՄ IX ՊԱՊԻՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՉՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ.....	39
Феликс Мовсисян - ЖУРНАЛ «МАСЬЯЦ АГАВНИ» («МАСИССКИЙ ГОЛУБЬ») О ЛИШЕНИИ СВЕТСКОЙ ВЛАСТИ ПАПЫ РИМСКОГО ПИЯ IX	54
Feliks Movsisyan - THE MAGAZINE "THE MASYATS AGHAVNI" ON DEPRIVATION OF POPE PIUS IX OF HIS SECULAR POWER.....	55
Հովիկ Գրիգորյան - ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՏՈՇԻ ԱՂԵՏԻՆ ՀԱՋՈՐԴԱՃ ԱՄԻՍՆԵՐԻՆ (1905 թ. ՄԱՐՏ - ՀՈՒԼԻՍԻ ԿԵՍԵՐ).....	56
Овик Григорян - ДЕЯТЕЛЬНОСТЬ УКАЗЫВАЮЩЕГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН В МЕСЯЦЫ, ПОСЛЕДУЮЩИЕ ЗА ТРАГЕДИЕЙ НА ВИТОШЕ (МАРТ - СЕРЕДИНА ИЮЛЯ 1905 Г.)	72
Novik Grigoryan - THE ACTIVITIES OF THE INDICATIVE ORGANIZATION OF ARF DASHNAK-SUTYUN IN THE MONTHS AFTER THE VITOSH DISASTER (FROM MARCH TO MID-JULY, 1905).....	73
Գայանե Հովհաննիսյան - ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ - 1930-ԱԿԱՆ ԹԹ.	74
Гаяне Оганнисян - ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1920-Х ГГ. - В 1930-Х ГГ.....	82
Gayane Hovhannisyan - DEMOGRAPHIC PROCESSES IN THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION IN THE SECOND HALF OF THE 1920S - IN THE 1930S.....	83
Էդիկ Մինասյան, Արտավազդ Դարբինյան - ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1991-1994 թթ.).....	84

Эдик Минасян, Артавазд Дарбинян – ОБ УЧАСТИИ СОТРУДНИКОВ И СТУДЕНТОВ ЕРЕВАНСКИХ ВУЗ-ОВ В ПЕРВОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЕ (1991-1994 ГГ.).....	89
Edik Minasian, Artavazd Darbinian – THE PARTICIPATION OF YEREVAN UNIVERSITIES IN THE FIRST ARTSAKH WAR (1991-1994).....	89
Դավիթ Բարսեղյան - ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՐԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՐԱԿՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....	90
Давит Барсегян – ЗНАЧЕНИЕ КОРПУСА СТРАЖЕЙ ИСЛАМСКОЙ РЕВОЛЮЦИИ В ОБЕСПЕЧЕНИИ ВНУТРИПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ.....	95
Davit Barseghyan – THE IMPORTANCE OF THE ISLAMIC REVOLUTIONARY GUARD CORPS IN ENSURING INTERNAL POLITICAL STABILITY	95
Լիլիթ Սալարյան – ԶԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ԵՎ 2018 Թ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ).....	96
Лилит Макарян – ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРМЕНИИ В 1920 Г. И В 2018 Г. ПОСЛЕ СМЕНЫ ВЛАСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ).....	103
Lilit Makaryan – THE POLITICAL SITUATION IN ARMENIA IN 1920 AND IN 2018 AFTER THE POWER SHIFT (COMPARATIVE ANALYSIS)	103
Էդիկ Մինասյան – «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՐԴՈՒԹՅԱՄԲ 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՍԱՍՅԱԿԱՆԵՐՈՒՄ... 104	104
Эдик Минасян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ФОНДА "ТУФЕНКЯН" ПО РЕАЛИЗАЦИИ ПРОГРАММ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ В КОНЦЕ XX И В ДВУХ ДЕСЯТИЛЕТИЯХ XXI ВЕКА.....	113
Edik Minasyan – ACTIVITIES OF "TUFENKIAN" FOUNDATION TO IMPLEMENT THE ECONOMIC DEVELOPMENT PROGRAMS OF THE REPUBLIC OF ARTSAKH AT THE END OF THE 20TH CENTURY AND THE TWO DECADED OF THE 21ST CENTURY	114
Էդգար Չախոյան – ՉԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱԿՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎՎԱՍՈՒՄ ՎՐԱՍԱՆ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ (1991-2019 ԹԹ).....	115
Эдгар Чахоян - ВОПРОСЫ ПЕРЕГРУППИРОВКИ ВООРУЖЕННЫХ СИЛ В КОНТЕКСТЕ ОТНОШЕНИЙ ГРУЗИИ И США НА ЮЖНОМ КАВКАЗЕ (1991-2019 ГГ.).....	134
Edgar Chakhoyan - ARMED FORCES REDEPLOYMENT ISSUES IN THE CONTEXT OF GEORGIA-US RELATIONS IN THE SOUTH CAUCASUS (FROM 1991 TO 2019).....	135
 ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY /	
Ռաֆիկ Նահապետյան – ԱՂԱՆԻԹԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՎԵՍ - XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ).....	136
Рафик Наапетян – ОБ ИЗУЧЕНИИ ЖИЛЫХ КОМПЛЕКСОВ АГДЗНИКА (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В. И НАЧАЛО XX В.)	146
Rafik Nahapetyan – ON STUDYING OF RESIDENTIAL COMPLEXES OF AGHDZNIK (SECOND HALF OF THE 19TH CENTURY AND THE BEGINNING OF THE 20TH CENTURY).....	147
Արտակ Խաչատրյան – ԱԴՐԲԵՉԱՆՑԻՆԵՐԻ ԷԹՆՈԳԵՆԵԶԻԱՄԻ ՓՆՏՐՏՈՒԹՅՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ.....	148
Артак Хачатрян – ПОИСКИ ЭТНОГЕНЕЗИСА АЗЕРБАЙДЖАНЦЕВ И КУЛЬТУРНАЯ ПОЛИТИКА В НКАО.	155

Artak Khachatryan – THE SEARCH FOR THE ETHNOGENESIS OF AZERBAIJANIS AND CULTURAL POLICY IN THE NKAO 155

ԱՐՇԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Աննա Դավթյան – 13-րդ դարի խաչքարերի շարքաշեղծություններ..... 156

Анна Давтян - ОРНАМЕНТЫ ХАЧКАРОВ XIII ВЕКА..... 164

Anna Davtyan - THE ORNAMENTS OF THE 13TH CENTURY KHACHKARS (CROSS-STONES)..... 164

Ռուզաննա Միքայելյան – ԳՅՈՒՄՐԻ ԶԱՂԱԹԻ «ՅՈՎՏԵՄԲԵՐ» ԿԻՆՈԹԱՏՐՈՆԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻՉԱՅՆԸ..... 172

Рузанна Микаелян – ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРА «ОКТЯБРЬ» В ГОРОДЕ ГЮМРИ 175

Ruzanna Mikayelyan – THE INTERIOR DESIGN OF CINEMA “НОКТЕМБЕР” IN GYUMRI 176

Զահրա Մալեքի – ՀԱՖԵԶԻ ԳԱԶԵԼԼԵՐԸ ՖԱՐԱՀ ՕՍՍՈՒԼԻ ԱԶԵՐԵՐՈՎ 177

Захра Малеки – ГАЗЕЛИ ХАФИЗА ГЛАЗАМИ ФАРАХ ОССУЛИ 187

Zahra Maleqi – HAFEZ’S GAZELLES AS SEEN BY FARAH OSSULI..... 187

Մարինե Գևորգյան, Գայանե Թովմասյան – ՀՀ ԱՐԱԳԱՇՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱԿՈՒՄԸ ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՄԱՐԶՈՒՄ ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՉԿԵՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ.... 188

Марине Геворкян, Гаяне Товмасын – ВОВЛЕЧЕНИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ АРАГАЦОТНСКОЙ ОБЛАСТИ РА В СФЕРУ ТУРИЗМА И АНАЛИЗ ВОЗМОЖНОСТЕЙ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕГИОНЕ 198

Marine Gevorgyan, Gayane Tovmasyan – INVOLVEMENT OF HISTORICAL AND CULTURAL MONUMENTS OF ARAGATSOTN REGION OF THE RA INTO TOURISM SPHERE AND THE ANALYSIS OF TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES IN THE REGION 198

ԱՐՔՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Լիլիթ Հակոբյան – ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ..... 199

Лилит Акобян - СОГЛАСОВАНИЕ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ И ЕГО ВЫРАЖЕНИЕ В ПРОИЗВЕДЕНИИ “ИСТОРИЯ АРМЕНИИ” КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ..... 204

Lilit Hakobyan – PECULIARITIES OF THE AGREEMENT BETWEEN THE SENTENCE PARTS AND ITS EXPRESSION IN KIRAKOS GANDZAKETSIS’ “HISTORY OF THE ARMENIANS” 205

Վահագն Հակոբյան – ԴՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 206

Ваагн Акобян – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА..... 218

Vahagn Hakobyan – FROM DAVID ANANUN’S LETTERS..... 218

ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Լիլիթ Մինասյան – ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԸՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՉԿԵՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ (ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ)..... 219

Лилит Минасян - ИСПОЛЬЗОВАНИЕ ИСТОЧНИКОВ НА УРОКАХ ИСТОРИИ ДЛЯ РАЗВИТИЯ ИСТОРИЧЕСКОГО И КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ УЧАЩИХСЯ (ИССЛЕДОВАНИЕ ДЕЙСТВИЙ) 229

Lilit Minasyan - USING SOURCES IN THE HISTORY CLASSROOM FOR DEVELOPING STUDENTS' HISTORICAL AND CRITICAL THINKING (ACTION RESEARCH)..... 229

Մերի Հովհաննիսյան - «ԴԵԲԱՏ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈՂԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 230

Мери Оганнисян - ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ МЕТОДА ДЕБАТОВ 236

Meri Hovhannisyán - FEATURES OF USING THE DEBATE METHOD..... 236

Արմեն Խաչիկյան - ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՌԱԶՄԱՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՈՒԲՍ. ՍՈՑԻՈՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՄԵԹՈՂԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒՃԵՐՈՒԲՍ..... 237

Армен Хачикян - ВОЕННО-СОЦИОЛОГИЧЕСКАЯ МЕТОДОЛОГИЯ ИЗМЕРЕНИЯ ЛИДЕРСТВА В ВОИНСКИЙ КОЛЛЕКТИВАХ. ПРИМЕНЕНИЕ СОЦИОМЕТРИЧЕСКОГО МЕТОДА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА 246

Armen Khachikyan - MILITARY SOCIOLOGICAL METHODOLOGY OF MEASURING LEADERSHIP IN MILITARY TEAM. APPLICATION OF SOCIOMETRIC METHOD IN THE RA ARMED FORCES..... 246

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ / РЕЦЕНЗИИ / REVIEWS

ԱՐՏԱԿ ՄՈԿՍԻՍՅԱՆ, ՄԻԶԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԼԻԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ԸՍՏ ԱՆՏԻԿ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԾԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲԱՂԱԲՅՈՒՐՆԵՐԻ ԶՐԵՍՏՈՄԱՏԻՎ), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 388 ԷԶ:..... 247

ՀՈԿՆԱՆ ԶԱՆՅԱՆ (ՀՈԿՀԱՆՆԵՍ ԱՐԱՋԱՆՅԱՆ), ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈԿ, ԵՐ., ԷՂԻՏ ՊՐԻՆՏ, 2020, 448 ԷԶ:..... 247

ՆԻԿՈԼԱՅ ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՄԵՉ ՇՂԹԱՆ ԴԱՐԵՐԻ ԽՈՐԶԻՑ ՄԻՆՉԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ (ՊԱՏՄԱԲԱՆ-ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ), ԵՐԵՎԱՆ, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏ., 2020, 428 ԷԶ:..... 250

ՆՈՐ ԳԻՐԶ ԵՐԿՐՈՐԴ ԱԾԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԵՐՈՍ ՀԱՅՈՒՅԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Յ. Գ. МИНАСЯН, АРМЯНКИ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ И ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1939-1945), МОНОГРАФИЯ, РОСТОВ-НА-ДОНУ-ТАГАНРОГ, ИЗ.-ВО ЮЖНОГО ФЕДЕРАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА, 2021, 284С.).. 252

ՄԵՐ ԵՐԱԽՏԱԿՈՐՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԵԼԵՈՆՅԱՆ..... 255

ԷՂԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ..... 258

ՀԱԿԵՐԺԻ ԵԱՍՓՈՐԴ

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1950-2021)..... 263

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 266

INFORMATION ABOUT THE AUTHORS 267

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 268

NOTICE FOR THE AUTHORS 268

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 269

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ռաֆիկ Նահապետյան

ԱՂՁՆԻՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

Հիմնարարներ. պատմական Աղձնիք, Սասուն, լեռնային բնակավայր, ազգատոհմային բնակավայրեր, բնակարանային տիպեր, ազգակցական թաղեր, ինքնապաշտպանություն:

Հոդվածը նվիրված է Աղձնիքի** հայ բնակչության բնակավայրային համալիրների ուսումնասիրությանը: Հեղինակը պատմագրական և իր գրառած դաշտային ազգագրական նյութերի համալիր հետազոտությամբ բացահայտել է խնդրո առարկայի մի շարք կողմեր: Հայկական գյուղը Աղձնիքում մինչև Հայոց ցեղասպանությունը պահպանել է ազգակցական թաղամասերով և անգամ մեկ ազգատոհմով առանձին բնակավայրում բնակեցման հնավանդ սովորույթը, որ թելադրված էր սոցիալ-տնտեսական և պաշտպանական նկատառումներով: Բնակավայրին բնորոշ հատկանիշներից մեկը բնակարանային համալիրների համախմբվածությունն էր մեկ ընդհանուր կտուրի տակ, որով գյուղերի հատակագիծը ձգտել է կլորության: Գյուղական բնակավայրերը իրար հետ կապված տների համալիրներ էին, որոնց կտուրները վերածվել էին անցուղիների, կոլեկտիվ աշխատանքների, ժողովատեղիների, հանդիսությունների հրապարակների: Պահպանվել է ազգատոհմերով, գերդաստաններով համատեղ բնակվելու սովորույթը, որը հանգեցրել է ազգատոհմային բնակավայրերի առաջացմանը:

Հիմնախնդրի ուսումնասիրության շուրջ

Հայկական գյուղական ավանդական բնակավայրի ազգաբանական համալիր ուսումնասիրությունն առ այսօր արված չէ: Առանձնանում են միայն ճարտարապետական ուղղվածությամբ Ստ. Մնացականյանի¹, Օ. Խալիփախյանի², Թ. Թորամանյանի³ և այլոց ուսումնասիրությունները: Այդուհանդերձ, այս կամ այն պատմաազգագրական շրջանի բնակավայրա-բնակարանային կառույցների համալիր հետազոտության համար տեսական և մեթոդական առումով արժեքավոր են Ստ. Լիսիցյանի⁴ ազգաբանական-վերլուծական բնույթի

* Հոդվածը ներկայացվել է 09.06.2021 թ., գրախոսվել՝ 15.07.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.07.2021 թ.:

** Աղձնիքը Մեծ Հայքի 15 աշխարհներից էր: Այն հայ ժողովրդի ծագման և կայմավորման հնագույն բնօրաններից՝ կենցաղամշակութային հարուստ յուրահատկություններով, որտեղ հայ բնակչությունը մինչև Մեծ եղեռնը և հայաթափումը կապվել է բնակչության գերակշիռ մասը: Աղձնիքի պատմաազգագրական ուսումնասիրությունը եղել է հեղինակի գիտական հետաքրքրությունների առանցքում: Մեծ եղեռնից մազապուրծ փրկվածներից, հատկապես՝ սասունցիներից գրառված դաշտային ազգագրական նյութերի հիման վրա հրատարակել ենք բազմաթիվ հոդվածներ և մենագրություններ, որոնք հիմնականում վերաբերում են արևմտահայոց այդ հատվածի էթնոմշակութային բնութագրին, սոցիոնորմատիվ մշակույթի հիմնախնդիրներին: Ձեռքի տակ եղած դաշտային ազգագրական նյութերը պահվում են հեղինակի անձնական արխիվում, տտ. 1-30, 1970-2012 թթ.:

¹ Մնացականյան Ստ., Հայաստանի գյուղական բնակավայրերի ճարտարապետությունը, Երևան, 1956:

² Халпахчян О., Гражданское зодчество Армении, М., 1971:

³ Թորամանյան Թ., Հայկական ճարտարապետության պատմություն, հ. 1, 2, Երևան, 1942, 1948:

⁴ Лисициан С. Д., К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам)// ИКИАИ, т. 3, Тифлис, 1925, с. 97-108; նույնի՝ Крестьянское жилище Высокой Армении// ИКИАИ, т. 4, Тифлис, 1926, с. 55-70; նույնի՝ Из материалов по изучению жилищ Армении. «Крестьянское жилище Меграинского района»// ИКИАИ, т. 5, Тифлис, 1927, с. 119-133; նույնի՝ Из материалов по изучению жилищ Армении. «Нор-Байазедский азарашенк и заметки о крестьянских жилищ из соседних районов Памбакского и Даралагязского»// ИКИАИ, т. 6, Тифлис, 1927, с. 133-140; նույնի՝ «Святыни у перевалов»// СЭ № 4-5, с. 200-212; նույնի՝ Очерки этнографии дореволюционной Армении// КЭС, Москва, 1955, № 1, с. 182-264; նույնի՝ Չանգեպուրի հայերը, Երևան, 1969; նույնի՝ Լեռնային Ղարաբաղի հայերը// ՀԱԲ, հ. 12, Երևան, 1981:

հետազոտությունները: Բնակավայրային համալիրների վերաբերյալ հետազոտություններ են արվել Է. Մելքոնյանի¹, Ս. Հարությունովի, Յու. Սկրտունյանի² և Հ. Մարությանի³ կողմից:

Գիտական նշանակությունը, նորույթը և արդիականությունը

Սույն ուսումնասիրության մեջ գրավոր և մասնավորաբար հեղինակի գրառած դաշտային ազգագրական հարուստ նյութերի հիման վրա փորձ է արվում ներկայացնել պատմական Աղձնիքի հայ բնակչության բնակավայրային համալիրների կառուցվածքային, հատակագծային և կենցաղամշակութային առանձնահատկությունները, կատարել տիպաբանական դասակարգում՝ ըստ բնակլիմայական և աշխարհագրական, էթնիկական-ավանդութային, տնտեսական, պատմաբաղադրական՝ ռազմատենչ այլ էթնիկ թշնամական տարրերի հարձակումներից ու թալանից անվտանգությունն ապահովելու և այլ գործոնների: Դրանց դիտարկումը, բացի կենսապահովման մշակութային նշանակությունից, կարևոր է նաև գյուղական բնակչության էթնիկ կազմի, տնտեսական զբաղմունքների, սոցիալ-ունեցվածքային, ընտանեկան, հասարակական կենցաղի ամենատարբեր հիմնահարցերի ուսումնասիրության համար: Պարզաբանվում են բնակավայրերի կառուցվածքի նյութական կողմերը՝ տեղագրություն, բնակեցման համակարգ, որոշակի օբյեկտների առկայություն՝ սրբավայր, պատմական հուշարձան, մշակելի հողատարածք, արոտավայր, խոտհարք, անտառ, կենսապահովման կառույցներ՝ գյուղեղուրս, ամրացված գոմ, փարախ, ջրաղաց, ձիթհան, ջրային տարածք, ժամանակավոր բնակատեղի, ամառանոց, ձմեռանոց և այլն: Բնակավայրը, կենսապահովման մշակույթից բացի, նաև հասարակական կենցաղի ուսումնասիրության աղբյուր է: Հեղինակը կարևորում է բնակավայրի ծագման, զարգացման, կառուցապատումների, բնակեցման համակարգերի, թաղերի ու փողոցների տեսքերի, բնակչության սոցիալական և էթնոժողովրդագրական գործընթացների, համայնքային հարաբերությունների, ժամանակավոր բնակավայրերի հետ ունեցած կապի ուսումնասիրությունը:

Քննարկվող հիմնախնդիրը գիտական նորույթի և արդիականության տեսանկյուններից ուշագրավ է մի քանի առումներով. նախ՝ հայ ազգաբանական գրականության մեջ ցարդ չկա համալիր ամբողջական հետազոտություն, եղածը ուրվագծային հրապարակումներ են, որոնք առավելապես տեղեկատվական բնույթի են և պատմաազգագրական որևէ շրջանի գյուղական բնակավայրային համալիրների առանձին կողմերի մասին են: Սույն հոդվածն առաջիններից է ազգաբանական ներկայացման տեսանկյունից: Երկրորդ՝ Աղձնիքի ազգաբանական համալիր ուսումնասիրությունը մեր կողմից դեռ ավարտված չէ, կենսապահովման մշակույթի, մասնավորաբար՝ բնակավայրի և բնակարանի յուրահատկությունների հետազոտության կարիք ունի: Դեռևս 1970-ական թվականներից գրառել ենք դաշտային ազգագրական նյութեր, որոնց զգալի մասն առաջին անգամ ենք դնում գիտական շրջանառության մեջ՝ հրատարակելով հոդվածներ բնակարանի⁴ և բնակավայրի⁵ մասին:

¹ Мелконян Э., *Сельские поселения Армении// Культура жизнеобеспечения и этнос, Опыт этнокультурологического исследования (на материалах армянской сельской культуры)*, Ереван, 1983, с. 117-188.

² Арутюнов С., Мкртумян Ю., *Сельские поселения Армении. Введение// Культура жизнеобеспечения и этнос, Ереван, 1983, с. 110-117.*

³ Марутян А., *Поселения и жилища// Армяне, Серия «Народы мира», Москва, 2012, с. 205-233.*

⁴ Նահապետյան Ռ., *Հայկական լեռնաշխարհի բնակարանաշինական ավանդների հնագույն կենտրոն// Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, Երևան, 2020, էջ 39-53; Նույնի՝ Հայկական ժողովրդական ավանդական բնակարանի պաշտոնական ուսումնասիրության շուրջ// Նույն տեղում, էջ 122-137; Նույնի՝ Հայկական ժողովրդական ավանդական բնակարանը ըստ գրավոր սկզբնաղբյուրների// Նույն տեղում, էջ 138-162; Նույնի՝ Գլխատան ավանդութային տիպերը XIX դար – XX դարասկիզբի// Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն, 2021, № 1, էջ 25-40; տրվ. տպ.՝ Նույնի՝ Ժողովրդական բնակարանի ավանդական համալիրների տիպերը Աղձնիքում (XIX դար-XX դարասկիզբ); Նույնի՝ Սյունիք-Արցախի ժողովրդական բնակավայրա-բնակարանային համալիրների ուսումնասիրության շուրջ (XIX դար-XX դարասկիզբ); Նույնի՝ Հայկական ժողովրդական ավանդական բնակարանային համալիրների որոշ առանձնահատկությունների շուրջ (XIX դար-XX դարասկիզբ):*

⁵ Նահապետյան Ռ., *Բնակեցման ավանդական համակարգը հայոց մեջ (XIX դար – XX դարասկիզբ)// Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես, 2020, № 2, էջ 228-236; Նույնի՝ Գյուղական ավանդական բնա-*

Հայ ժողովրդական բնակարանի և բնակավայրային համալիրների ազգաբանական դիտարկումներն ունեն ինչպես գիտաճանաչողական, այնպես էլ արդիական, կիրառական նշանակություն: Ժամանակակից բնակավայրերի հատակագծման, բնակելի տների նոր ձևերի որոնման առումով առաջնակարգ նշանակություն է ստանում հայկական ժողովրդական ճարտարապետության դարավոր փորձի ուսումնասիրությունը, քանզի երկար ու ծիգ դարերի ընթացքում կուտակված ժողովրդական հմտությունները շատ ուսանելի նյութ կարող են տալ: Ոչ պակաս կարևոր նշանակություն կարող է ունենալ փողոցների, տրանսպորտային ուղիների և հատկապես գյուղական բնակավայրերի դասավորության հարուստ փորձի ու հմտությունների ուսումնասիրությունը, որոնք ինքնատիպ դրսևորումներ են ունեցել պատմաազգագրական շրջաններում: Ժողովրդական հորինվածքային մտածողության մեջ մշակված հարուստ ավանդույթները, անշուշտ, պետք է մասնագիտական ուսումնասիրության առարկա դառնան արդի պայմաններին համապատասխան կիրառության համար:

Ուսումնասիրության ընթացքը և արդյունքները

Ամենուրեք, մասնավորաբար՝ պատմական Աղձնիքում, օտար, վաչկատուն, ռազմատենչ ցեղերի հետ խառը բնակեցման պայմաններում հայ բնակչությունը բնակավայրերը հիմնելիս հարկադրաբար առաջին հերթին հաշվի է առել էթնիկական-ավանդույթային՝ համայնքային համախմբվածության գործոնների անհրաժեշտությունը, բնական պաշտպանվածությունը, ապա տնտեսավարման նպատակահարմարությունը՝ ջրամատակարարումը, անտառների և արոտավայրերի մոտիկությունը, քամիների ուղղությունը, արևահայացությունը: Լեռնային բնակավայրերը հիմնելիս հաշվի են առնվել նաև՝ ա) տեղավայրի կտրտվածությունը և ավարառուների համար անմատչելիությունը, բ) տնամերձ հողամասին կից տուն կառուցելու նպատակահարմարությունը՝ մշակվող հողին մոտիկ լինելը, այդ հողամասը աղբին դարձնելը (գոմաղբով պարարտացնելը), սահմանափակ թվով անասունները մերձակա տարածքներում արածեցնելու հնարավորությունը, գ) ավանդական անտառահատական երկրագործությամբ զբաղվելը, դ) երկրագործության համեմատ անասնապահության ոչ պակաս եկամտաբեր լինելը, այդ պատճառով արոտավայրերը և անտառների զգալի մասն ընտանիքների վրա բաժանելը, հետևապես՝ անասնակերի աղբյուրները տներին մոտեցնելը և այլն:

Ինչպես Աղձնիքում, այնպես էլ համայն հայոց մեջ բնակավայրերը էթնիկական-ավանդույթային, տնտեսական, հասարակական ու քաղաքական և բնակլիմայական ու աշխարհագրական տարբեր պայմաններում ընդունել են զանազան ձևեր: Լեռնային շրջաններին բնորոշ էր գյուղական տների ցրվածությունը (ազարակատիպ բնակավայր), իսկ հարթավայրերին՝ կծկվածությունը: Աղձնիքի լեռնային շրջանների բնակավայրային հիմնական տիպը լեռնային թեթ լանջերին, երբեմն էլ՝ լանջային կամ խոր հովիտների մեջ ձորատեղադրմամբ բնակավորումն է, ինչը պայմանավորված էր հիմնականում տնտեսական ու պաշտպանական հանգամանքներով: Սասունում ձմռան արհավիրքներին և ձնահոսքերին (**հոսիկ**) լավ ծանոթ լինելով՝ գյուղական բնակավայրեր կամ տներ հիմնում էին այնպիսի վայրերում, որտեղ կարողանային խուսափել բնակավայրեր ծածկող այդ աղետաբեր չարիքից: Հաշվառում էին ոչ միայն արևահայացությունը, ջրերին՝ գետերին ու առվակներին մոտ լինելու հանգամանքը, այլև քամիների ուղղությունը: Բնակավայրերի տեղադրումը լեռնալանջերին տնտեսապես արդյունավետ էր այնքանով, որ առափնյա սարահարթերն օգտագործվում էին բացառապես որպես հացահատիկի ցանքադաշտեր, որոնք առանց այն էլ շատ սակավ էին և չէին բավարարում բնակչության նվազագույն պահանջները: Նույնիսկ այգիներն ու բանջարանոցները հիմնում էին գրեթե անմատչելի ձորալանջերին՝ դարավանդային համակարգով:

կավայրի ուսումնասիրության հիմնախնդիրը հայ ազգաբանական գիտության մեջ// Պատմություն և քաղաքականություն հայագիտական հանդես, 2021, № 3, էջ 31-45; նույնի՝ Հայկական ավանդական բնակավայրային համալիրների ձևավորման գործոնները, տիպաբանման սկզբունքները, կառուցվածքաբանությունը, բնորոշ և յուրահատուկ գծերը (տրվ. տպ.):

Բնակավայրերը սովորաբար տեղադրվում էին արևահայաց լանջին՝ տների ճակատն անպայման դեպի արևելք կամ հարավ-արևելք: Տունը կառուցելիս հիմքերն այնքան էին փորում, որ ետևի պատը ամբողջապես թաղվում էր հողի մեջ, տանիքի ետևի կողմը հավասարվում էր լանջի մակերեսին. այդ մասը կոչվում էր **տապալ**, որտեղից հոսելու էին անձրևաջրերը, մաքրելու տանիքը ձյան հաստ շերտից: Նման տեղադիրքով բնակավայրերը երբեմն ունենում էին դարավանդային տեսք՝ տների նախորդ շարքի կտուրները բակ էին ծառայում հաջորդ շարքի համար: Բնակարանը կառուցվում էր այնպիսի հարմարությամբ, որ ընտանիքը, անասունները և անասնակերը իրար մոտիկ գտնվեին: Տեղանքի հնարավորություններից ելնելով՝ ձգտել են մոտ կառուցել բնակարանը, գոմը, ախոռը, մարագը, կալն ու կալատունը: Սասունցիների մշակելի հողատարածությունների մի զգալի մասը գտնվում էր բնակավայրերից հեռու՝ անառիկ ու լեռնոտ տեղերում, ուստի բերքի և անասնակերի տեղափոխության անհնարինության պատճառով ժամանակավոր բնակավայրեր էին հիմնում, իսկ նորակազմ շատ ընտանիքներ էլ հարկադրաբար հիմնում էին մշտական բնակության տներ, գոմեր ու մարագներ: Այդ կարգի ագարակները համարվում էին հիմնական բնակավայրերի **մզրաները**: Սասունում լեռնային կտրտված ռելիեֆի պատճառով ամեն գյուղ ուներ այդպիսի մի քանի մզրա: Բնակավայրի ձորալանջերին, գետափերին տարածվում էին այգիները, հաճախ՝ նաև փարախները, ջրաղացները, ձիթհանները: Գյուղի կալերը հարդարվում էին բնակավայրերից դուրս՝ սարահարթերին, արտերին մոտ, որպեսզի ոյուրացվեին հացահատիկի տեղափոխումն ու կալումը: Կալերին առընթեր տեղադրվում էին հարդանոց-մարագները: Հաճախ սարահարթի մշակության ոչ պիտանի, անօգտագործելի տարածքում էր հիմնվում ազգատոհմային տեղամասերով գերեզմանոցը:

Գյուղը սովորաբար ունենում էր իր հրապարակը՝ գյուղամեջը, որը տղամարդկանց համայնքային հավաքույթների վայրն էր գարնան, ամռան և աշնան ամիսներին:

Հարթավայրային բնակավայրերը գոյացել էին ազգակցական թաղերից և ազգակցական ու հարևանական կցաթաղերից, երևույթ, որ բնորոշ էր հատկապես դաշտամշակությանը զբաղվող շրջաններին: Այս տիպի գյուղերի կծկվածությունը, բլուրշիկությունը հիմնականում պայմանավորված էր գերդաստանական ընտանիքների բազմացման ու ճյուղավորման, ազգակցական ու համայնքային համագործակցության ու ինքնապաշտպանության հանգամանքներով: Կցաթաղերից գոյացած բնակավայրերի կտուրները վերածվում էին տնտեսական ու արտադրական հարթակների, անցուղիների, ժողովատեղերի, երեխաների խաղահրապարակների ու զրուցարանների, ամռանը նաև՝ ննջարանների: Կցաթաղերը ոյուրացնում էին հաղորդակցումը: Ազգակից և հարևան գերդաստանները միջնապատերից տարբեր մեծության անցքեր էին թողնում, որոնք ծառայում էին իրեր փոխանակելուն, գույժերն ու լուրերը միմյանց հաղորդելուն: Հայաստանի ողջ տարածքին հայտնի հաղորդակցության այս անցքերը կոչվում էին **ակնատ** կամ **տրիճակ**, իսկ Աղձնիքում՝ **շբակ** (պատուհան): Սասունի հովտային (օր.՝ Մոտկանի ենթաշրջանի) Սղունդ, Խսիսեր, Մլաֆան, Հրորթ, Ծման, Ցրտուտ կամ Ազնվաց ձոր (Գյոզելդերե) տարածաշրջանի մեծ ու փոքր գյուղերում ազգակից ընտանիքների տներն այնքան մոտ էին կառուցված, որ հաղորդակցվում էին միմյանց հետ ներսից՝ շբակ-ակնատներով: Նույնը նաև Հազգո քաղաքում: Ըստ որում՝ եթևիկապես խառը՝ հայերով և քրդերով բնակեցված գյուղերում հայկական ընտանիքները բնակվում էին առանձին թաղերով՝ ազգովի պարտադիր համատեղ բնակեցմամբ: Ազգատոհմ ընտանիքների տները շատ հաճախ այնպես էին կպած իրար, որ ամբողջության մեջ հիշեցնում էին միասնական ճարտարապետական համալիր: Օրինակ՝ Սասունի Գելիեգուզան գյուղում ազգակից ընտանիքների տները միմյանց այնքան մոտ էին հիմնված, որ Պետտո (Պետրոս) ազգատոհմի Գորթե (Գրիգոր), Ավե (Ավետիք), Գիրո (Կիրակոս), Սրկո (Սարգիս), Խչո (Խաչատուր) տների կտուրներն ունեին մի ելարան, իսկ նույն գյուղի **Նիկո** (Նիկողոս) **տներ** անվամբ ազգության Մոսոյի (Մովսես), Ավեի (Ավետիք), Մխեի (Մխիթար) Մարտոյի (Մարտիրոս), Գորթեի (Գրիգոր), Մուրոյի (Մուրադ) տների կտուրները վերածվել էին

Նաև կալատեղի, որտեղ կալսումը կատարվում էր **գոռի** կամ **կոռի** կոչվող եզների խմբի՝ կալի վրա շրջանաձև պտույտով հացահատիկի հասկերի տրորման եղանակով¹: Նույն պատմական Աղձնիքի հարավային հարթավայրային շրջանների հայկական գյուղերը (Ալմատի-Նա շրջանի Բրա, Շքաստակ, Մլքիշան և այլն) բնակեցված էին ազգակցական թաղերով, միակտուր տանիքներով, պարսպապատ բակերով, տարբեր ուղղություններով բացվող մուտքերով, երբեմն՝ մեջք մեջքի, երբեմն էլ՝ կողք կողքի դասավորությամբ տներով, գաղտնի, ներսից, շատ հաճախ՝ գոմից, միմյանց տները կապող **շքակներով**: Դրանցով ազգատոհմի ընտանիքները հարևանություն էին անում, վտանգի դեպքում ինքնապաշտպանությունն ապահովում: Սակայն ազգակցական թաղն ընդհատող փողոցների, ձորակների և ամեն տեսակ խոչընդոտների առկայության պարագայում լուրերը հասցվում էին տնից դուրս գալով: Այս և այլ պատճառներով ազգակից ընտանիքները համախմբվելով կենտրոնանում էին մայր ընտանիքի շուրջ՝ ստեղծելով ազգակցական թաղ, որը կրում էր ազգի հիմնադրի անունը: Ազգակցական այս թաղերը փորձում էին հնարավորին չափ թույլ չտալ օտարի մուտքն իրենց մեջ: Հայկական բնակավայրերում ազգակցական թաղերով ապրելու ընդհանրական սովորույթի դրսևորում էր նաև այն, որ կտուրները միաժամանակ վերածվում էին անցուղիների, ժողովարանների, մանկական ու մարզական խաղերի, հարսանեկան պարերի, խմբային աշխատանքների՝ Երիշտա կտրելու, բուրդ փռելու, վերմակ կարելու և այլ միջոցառումների վայրերի: Փողոցի ձևը կախված էր նրանից, թե ինչպես, ինչ ուղղությամբ էին կառուցվում ազգակցական թաղերը: Հարևան ազգակից ընտանիքները փոխադարձ համաձայնությամբ ճանապարհը հարմարեցնում էին փոխադրական միջոցների տեսակներին: Փողոցի ձևը և մեծությունը թելադրում էին կողմերը, մանավանդ զորեղ «ազգ»-ը, որը հնարավորին չափ սեղմում էր, փոքրացնում այն: Կողմերի դիրքորոշման վրա ազդում էր նաև գյուղական հասարակության պահանջը: Ծուռտիկ փողոցները ծառայելու էին երկանիվ սայլերով երթևեկությանը: Այս էր պատճառը, որ մինչև եղեմը և հայաթափվելը Արևմտյան Հայաստանում հայկական գյուղը կցատների մի խիտ զանգված էր՝ կլորության ձգտող հատակագծով: Ազգակցական թաղերը, սակավ բացառությամբ, զուրկ էին տնամերձ հողերից: Այգիները, մեծ մասամբ, գտնվում էին թաղերից դուրս: Թաղերն ու փողոցները կազմվում էին հիմնականում տարերայնորեն՝ առանց պլանավորման: Սասունում «հարևան ընտանիքները, ընդհանրապես արյունակիցներ էին, որովհետև գյուղերի և հողերի իրարից ցրված լինելու համար ամեն մի գյուղի կամ թաղի և հողամասի վրա տեղավորված էին գերդաստաններից գոյացած հարևաններ: Այնուամենայնիվ, այս հարևանների մեջ երբեմն այս կամ այն պատճառով կային և ոչ արյունակից դրացիներ»²:

Արդ, ի՞նչ գործոններով էր պայմանավորված ազգովի դարավոր, համատեղ կենցաղավարումը: Մեր բազմամյա ուսումնասիրությունները փաստում են, որ պատմական Աղձնիքը մշտապես ենթարկվել է օտար նվաճողների հարձակումներին, իսկ XV-XVI դարերից ի վեր թուրք-բրդական վայրագ վարչաձևերի առկայությունը տեղական Նստակյաց երկրագործական տնտեսաձևով ապրող հայ բնակչությանը դրդել է իր գոյության պահպանման համար ապրել երբեմնի տոհմական համախմբվածության հնագույն ավանդույթներով՝ գերդաստանական ընտանեձևերով, ազգակիցների տնտեսական, գաղափարական, հասարակական, առավել ևս տարածքային միասնության սերտ կապերով: Ազգակցական թաղի մեջ ոչ ազգակից ընտանիքի գոյությունը անհանդուրժելի էր օտարի հարձակումների ժամանակ արագ ինքնապաշտպանություն կազմակերպելը խոչընդոտելու պատճառով: Տոհմական հնավանդ հարաբերությունները կայուն պահպանած օտարահպատակ այս տարածաշրջանում հայ բնակչության տնտեսական և գաղափարական շահերը պահանջում էին ունենալ տնտեսական-արտադրական կյանքը կազմակերպելու, փոխօգնության և ինքնապաշտպանության հնարավորություններ. դրա գլխավոր պայմանը ազգի ընտանիքների

¹ Տե՛ս Նահապետյան Ռ., Հայոց ազգակցական համակարգը. XIX դ. երկրորդ կես - XX դ. սկիզբ (պատմա-ազգագրական ուսումնասիրություն), Երևան, 2012, էջ 92:

² Տե՛ս Պետոյան Վ., Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 230:

համատեղ բնակվելն էր՝ երբեմն կազմելով առանձին գյուղ կամ գյուղակ, իսկ հետագայում՝ առավելապես առանձին թաղամաս: Համախմբված թաղը հայ իրականության մեջ ամենից առաջ ուներ պաշտպանական նշանակություն, մանավանդ եթե ազգատոհմն ուներ ընդհանուր օգտագործման վարելահող, ոռոգման համակարգ, համատեղ ցանքս, արտադրական կառույցներ՝ ջրաղաց, ձիթհան, դարբնոց, կալ, զոմ, մարագ և այլն: Բնակավայրերի և բնակարանների հիմնադրման ամենակարևոր պայմանը հայ բնակչության համար մշտապես, գրեթե ամենուրեք եղել է ինքնապաշտպանության կազմակերպման անհրաժեշտությունը: Խնդիրը ոչ միայն նյութական շահերը, այլև բարոյական նորմերը պահպանելն էր, ազգատոհմի համերաշխությունը կայուն պահելը և վերջապես, վաչկատուն թշնամիների անակնկալ հարձակումներից պաշտպանվելու անհրաժեշտությունը:

Բնակավայրերի առաջացման պատմությունը և մեր դաշտային ազգագրական հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ դրանք սկզբնապես բնակեցված են եղել մեկ գերդաստանի ճյուղավորումից առաջացած ընտանիքներով: Հետագայում է, որ համալրվել են այլ ազգատոհմերի պատկանող ընտանիքներով: Այդպիսի բնակավայրերը հիմնականում կոչվել են տվյալ գերդաստանի հիմնադրի անունով: Այսպես՝ Վ. Պետոյանի հավաստմամբ՝ Սասունի գավառի գյուղական հասարակությունը մեծ մասամբ բաղկացած էր մերձավոր և հեռավոր ազգակից ընտանիքներից, ուստի հարս էին բերում հիմնականում հարևան գյուղերից¹: Սասնա ազգագրական նյութերի մեկ այլ գրառող՝ Ե. Կարապետյանը, հիշատակում է մեծ ազգերի անվանումներով մի շարք գյուղեր՝ Բլոկանք, Կծանք, Գիլոնք (Խուրթ), Մրցանք, Հուսենք, Աբու թաղ, Միրի թաղ, Սարենք (Մոտկանի շրջան), Փսանք, Թաթանք, Զաջառենք, Մգթենք, Բալոյենք (Փսանաց շրջան), Սաղտուն, Ահարոնք, Խիանք, Դվալենք, Սպաղանք, Հլոդիլք (Խիանքի շրջան) և այլն²: Այս առումով զգալի են մեր գրառած նյութերը: Ըստ բանասացների՝ Տալվորիկի 11 թաղերը ներկայացված են իբրև ազգակից ընտանիքների բնակատեղիներ, որոնք հետագա դարերում վերածվել են ինքնուրույն գյուղերի՝ հիմնադիր գերդաստանական տների տոհմական անվանումներով. Իրիցանք, Այանցիք, Շատախ գավառում՝ Հրեկոնք, Վիժնանք, Ջալալիք, Դոլանք, Արջոնք, Շեղկոնք, Չմալենք, Թաթանք, Ճախրկանք, Մտրպանք, Զրդամանք, Մաղենք, Բիսթաղ, Դմալենք, Զաջբըլենք, Ծուռեկանք, Հազգոյի շրջանում՝ Փիրշենք, Չիլանք և այլն³: Ամառանոցային-արոտավայրային ժամանակավոր բնակավայրերը և մշտական բնակավայրից հեռու ընկած գոմերն ու հարակից տարածքներն աստիճանաբար վերածվում էին մեկուսի բնակավայրերի, երևույթ, որն արագ ընթացավ XIX դ. վերջերին և XX դարի սկզբներին՝ Արևմտյան Հայաստանում պարբերաբար կրկնվող հայ բնակչության հալածանքների ու կոտորածների, ուղեկցվող սովի, ապրուստի հայթայթման դժվարությունների հետևանքով⁴: Սասնա ազգակցական անվանումներով գյուղերի մի զգալի մասը, այդ հանգամանքով պայմանավորված, փոքր գյուղեր էին՝ բաղկացած 14-15 տներից⁵:

Դաշտային Աղձնիքին մերձակա Հայնի քաղաքում հայերն ապրում էին առանձին թաղամասերով: Հայկական թաղամասերը կրում էին ազգակցական անվանումներ՝ Տեր-Վանեսյանց, Նաճառենց, Դանսենց, Ջըլիենց, Եփրեմենց տներ և այլն⁶: «Հայկական տները միմյանց կպած էին այնպես, - գրում է Բ. Ժամկոչյանը, - որ ամբողջ մասը միակտուր զանգված էր կազմում: Վտանգի դեպքում հայ բնակչությունը ստիպված էին փակվել տներում՝ Ժամու թաղի ծայրագույն արևմտյան տունեն մինչև Ժողովարանի թաղին ծայրագույն արևելյան տունը երթ ու դարձ կար ներսեն բացված անցքերով (ակնատ), առանց փողոց ելնելու»⁷: Ի

¹ Տե՛ս Պետոյան Վ., *նշվ. աշխ.*, էջ 312:

² Տե՛ս Կարապետյան Ե., *Սասուն (ազգագրական նյութեր)*, Երևան, 1962, էջ 3-4:

³ Տե՛ս Նահապետյան Ռ., *Հայոց ազգակցական համակարգը*, էջ 100:

⁴ Տե՛ս Նահապետյան Ռ., *Անձնական արխիվ*, տետր 6, էջ 211-212 և այլն:

⁵ Տե՛ս նույն տեղը:

⁶ Տե՛ս Ժամկոչյան Բ., *Հայնի, Պեյրութ*, 1952, էջ 33:

⁷ *Նույն տեղում*:

դեպ, տաք կլիմայով օժտված այս և հարակից այլ շրջաններում համայնքային սովորույթի համաձայն, դարձյալ ինքնապաշտպանությունից դրդված, ազգովի թաղերով, դուռ-դրկիցներով բնակավայրամերձ քարայրներում, ջրերի, ջրվեժների մոտ լոգանքի և լվացքի հատուկ օրեր էին սահմանվում: Ժամանող ընտանիքների թիվը հասնում էր երկու-երեք տասնյակի, և նույնքան էլ օջախ էր վառվում: Տան հարսները նախ լողացնում էին ավազ, տարեց տղամարդկանց, կանայք լողանում էին արևը մայր մտնելուց հետո: Համայնքային նմանատիպ այլ սովորույթներ ևս գոյություն ունեին:

Այսպիսով՝ առավել տարածվածը ազգակցական թաղերով բնակեցման համակարգն էր. երևույթ, որ գոյատևեց մինչև արևմտահայոց մեջ մինչև ցեղասպանությունն ու հայրենազրկումը, իսկ արևելահայերի շրջանում՝ մինչև XX դարի 50-ական թթ. լեռնային, մասամբ՝ նաև անասնապահությամբ զբաղվող նախալեռնային բնակավայրերում:

Աղձնիքն Արևելքի և Արևմուտքի տարանցիկ հանգույց էր, որտեղով բազմաթիվ քարավաններ էին անցնում: Հայերից բացի՝ լինում էին օտարազգի հյուրեր՝ քրդեր, թուրքեր, արաբներ, պարսիկներ, ասորիներ, հույներ, իսկ XVIII-XIX դարերում՝ նաև եվրոպացիներ: Հայ համայնքը, մասնավորաբար՝ X-XIV դդ. սկսած, երբ այստեղ թափանցեցին խաշնարած թուրքական ու քրդական վարչակարգերը, հայ ժողովրդին պարտադրեցին նաև իրակա-նացնել հարկադրական համայնքային հյուրընկալում: Քրդական զինյալ խմբերը, հարկահանները, ցեղապետերն ու նրանց պատվիրակներն իրենց այցելություններով մշտապես պատուհաս էին դարձել տարաբախտ արևմտահայ բնակչության գլխին: Հայ գյուղացին անգամ հարկերը հավաքելու ընթացքում պարտավոր էր կերակրել մյուլթեզիմին ու գյուղում գտնվելու ողջ ընթացքում նրա հետ եղածներին. «...երբեմն ալ կծեծվին և երբեմն ալ կանանց պատիվն կարատավորվի»¹: Դարերի ընթացքում այստեղ արդեն կենցաղ էր դարձել, որ ամեն մի քրիստոնյա ընտանիք պարտավոր էր առնվազն երեք օր իր տանը «հյուրընկալել» մահմեդական ճանապարհորդների և պետական ծառայողի: Քրիստոնյա տանտերն իրավունք չունեին հրաժարվելու դրանից և պարտավոր էր առանց առարկության հայթայթել այն ամենը, ինչ նա կպահանջեր, կատարել նրա քմահաճույքները: Մեր բանասացներից մեկի՝ 85-ամյա Խաչատուր Խափլանյանի հաղորդած տեղեկության համաձայն՝ պատմական Խուրթ գավառակի քրդահպատակ շրջաններում հայ ընտանիքի բարոյական պատիվն ու արժանապատվությունն վիրավորող տուրք էին սահմանել՝ մաղի խեմքը, որ մաղատար էր կոչվում. խեմքը անցկացնում էին կնոջ գլխով և մեջքով: Եթե այն մնար կնոջ կոնքերին, հարկ էին վերցնում: Ահա թե ինչու հայ ընտանիքը հաճախ վրեժ էր լուծում անարգողներից և գիշերով լքում հայրենի գյուղը²:

Համայնքային հյուրընկալման վայր կարող էր ծառայել նաև գյուղի տանուտիրոջ բնակարանին կից կամ վերնատանը առանձին մուտքով կառուցված հյուրասենյակը՝ օդան: Անցանկալի հյուրեր ունեցողները կանանց առանձնացնում էին բնակարանի խուլ անկյուններից մեկում: Կանայք մեկուսացված էին մնում մինչև նրանց հեռանալը:

Հնագույն սովորույթի համաձայն՝ XIX դ. վերջերին հայ համայնքը կառուցում էր իջևա-նատներ՝ **օդաներ**՝ իրենց գոմերով, որոնք հատկացվում էին հատկապես մեծ քարավանատերերին, սայլվորներին, գրաստավորներին, բազմաբանակ հյուրերին և համայնքին անծանոթ այլ անձանց: Օդա-հյուրանոցները հիմնվում էին համայնքի ընդհանուր ուժերով ու միջոցներով՝ ըստ ունևորության և ընտանեկան կազմի:

Աղձնիքի դաշտային Հզնամիր և շրջակա այլ գյուղերում համայնքային հյուրանոց-օդաներում առանձին ծալքատեղեր էին հատկացնում հայերի և այլադավանների համար՝ առանձին քնելատեղերով: Հայ և այլազգի քրիստոնյա հյուրերն ընդունվում էին որպես տան

¹ Տե՛ս Ատենագրութիւնք երեսփոխանական ընդհանուր ժողովոյ, Կ. Պոլիս, 1874, էջ 470:

² Տե՛ս Նահապետյան Ռ., Անձնական արխիվ, 1970, գ. Իրինդ, տետր 3:

անդամ և պատվով ու հարգանքով հյուրասիրվում գլխատան մեջ՝ օջախի շուրջը¹: Օգտվելով տեղաբնիկների անպաշտպանությունից՝ վայրենաբարոները հյուրի անվան տակ ոչ միայն նյութական, այլ նաև բարոյական վնասներ էին պատճառում: Ուստի և պատահական չէ, որ հայերը հարկադրված էին կառուցել համայնքային իջևանատներ՝ այդպիսի անկոչ հյուրերին առանձնացնելու և վերահսկողությունն ուժեղացնելու նպատակով: Համայնքային հյուրանոց-օդաների դուռը մշտապես բաց էր, որոնց հսկողությունը գյուղական ռեսի հանձնարարությամբ իրականացնում էր կատարածուն (գզիր), իսկ նրա բացակայության դեպքում՝ նշանակված անձինք (մեկ շաբաթ տևողությամբ), որոնք հայտնի էին շաբթագզիր անվամբ: Այստեղ սաքունների (բուխարու աջ և ձախ կողմերի հողաբարե թմբերի) կամ առձելների (փայտե անշարժ թախտերի) վրա դրվում էին անկողինները, ճամփորդական իրերը: Գեղջավազը (ռեսը) օտար հյուրերին և նրանց կենդանիներին կերակրելու միջոցները՝ հացը, վառելիքը, անասնակերը, հոգում էր համայնքի ընտանիքներից: Ուտեստը մատակարարվում էր հերթական կարգով՝ ըստ ցուցակի:

Աղձնիքի հովտային հայկական գյուղերում համայնքային հյուրընկալման պարտականությունն ընկնում էր համայնքի վարչական մարմնի՝ գեղջավազի և չորս տարեց, հեղինակավոր անձանց վրա: Այցելու օտարականները կամ պաշտոնյաները բաժանվում էին ազատների (այսպես էին կոչում ունևոր ընտանիքներին – Ռ.Ն.) վրա, իսկ եթե նրանց թիվը փոքր էր, բավարարվում էին ռեսի տանը հյուրընկալությամբ: Անցողիկ-հարկադրական հյուրընկալումը, համենայն դեպս, հայերը մի կերպ տանելի էին համարում: Կար ավելի անտանելին: Վաչկատուն քրդերը ձմեռանոցներ չունենալու պատճառով աշնան վերջին իջնում էին հայոց գյուղերը և պահանջում հյուրընկալել իրենց ընտանիքներին ու կերակրել, տեղավորել իրենց անասունները գոմերում ու փարախներում և ապահովել կերով: Հայ ընտանիքները հարկադրված էին «հյուրընկալել բարբարոսներին» և 5-6 ամիս անհատույց ծառայել նրանց. երևույթը հայտնի էր **գշլաղ** անունով: Գ. Սրվանձտյանցը գրում է. «...գշլաղ վրանաբնակ քյուրտեր աշնան եղանակներ կուզան հայոց գյուղերը ձմերելու. և հայերը ամեն տարի իրենց տան ու անասնոց պետքերին հետ կիռզան ու կպատրաստեն նոցա համար ևս ամեն կերպ պիտույթն ու կարիք: Թեև օսմանյան ... տերության շնորհիվ Ասունք արձեղված են, սակայն և ներքին տեղեր կշարունակվին տակավին»²: Ուշագրավ նկարագրություններ է թողել նաև Րաֆֆին³:

Թովմա Արծրունին դեռ X դ. Սասնա լեռնային շրջաններում տների ցրվածությունը որպես բացառություն է ակնարկել. «Եւ բնակեն առանձին ըստ տունս ազգաց և այնչափ ի բացեալ են ի միմեանց՝ մինչ թե ոք յարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղաց ուժգին խանչիցե՛ հազիւ թե ուրեք կարիցե առնուլ զբոմբին ձայնին, իբրև ի վիմաց ինչ արձագան լինելոյ կարծիս բերելով»⁴: Իսկ XIX դարի վերջերի աղբյուրներից մեկի հավաստմամբ՝ «Սասունի լեռնային բնակավայրերի տները շինված են միմյանցից մի մի վերստ և ավելի հեռու, այդքան միջոցը թողնելով հոտերին ու նախիրներին իբրև արոտատեղեր: Այնպես որ, յուրաքանչյուր գյուղ բռնում էր ահագին տարածություն՝ 5-10 սարերի ու հովիտների վրա փռված»⁵: Տների այդ աստիճան հեռավորությունը նկատի ունենալով՝ տեղի պատմագիրներից մեկը գրում է. «Առհասարակ Սասունի մեջ գյուղերը բաժանված էին գյուղակներու՝ իրարմե ոչ այնքան հեռու տարածության մը վրա, բայց այս գյուղակները կապված կը մնային մայր գյուղի հետ և միշտ անբաժան մաս նկատված անոր»⁶: Բնակելի տների տիպերը, որոնք, սակայն, տարբերվել են միմյանցից, հանդես են բերել տեղական ավանդույթներից բխող ընդհանրական

¹ Տէ՛ս Նահապետյան Ռ., *Աղձնիքահայոց հյուրընկալման ավանդույթը (XIX-XX դդ.)* // *Ազգաբանական ուսումնասիրություններ*, գիրք 3, էջ 217-229:

² Տէ՛ս «Արծուի Վասպուրականի», 1862-1863, 3, էջ 73:

³ Տէ՛ս Րաֆֆի, *Եժ*, հ. 4, Երևան, 1965, էջ 318-319:

⁴ Տէ՛ս Թովմա Արծրունի, *Պատմութիւն Տանն Արծրունեաց*, Թիֆլիս, 1917, էջ 203:

⁵ Տէ՛ս «Արաբս», 1894-1896, գ. Ա, էջ 80:

⁶ Տէ՛ս Տարրնեցի Աղան, *Պատասխանատուները Տարրնի եղեռնին*, Սան Ֆրանսիսկո, 1966:

գծեր, ինքնատիպ հորինվածքներ: Բանահավաք Ս. Յայկունին գրեթե նույնանման ուշագրավ նկարագրություն է թողել համշենահայերի գյուղական բնակավայրերի վերաբերյալ: Նա գրում է. «Տրապիզոնի լեռներու և անտառներու մեջ բնակություն հաստատած համշենահայերի թվով 20 գյուղեր գետեղված են բարձր ու ցածր լեռներու, ընդարձակ անտառների մեջ, մեծամասամբ զառիվայր դիրքերու վրա: Կան տներ, որոնց շուրջը դժվարությամբ մարդ կքայլէ: Գյուղ մի 20-40-50 տնէ կբաղկանա, քիչ բացառութեամբ գյուղի տներ 1-2 ժամ երկարություն ունեցող տարածութեան վրա գետեղված են, ամեն մի տուն իրարմէ 1-2-3 կամ 5 վերստ հեռուն շինված է, կան տներ դրացու դուռը արձակված հրացանի ձայնը անգամ չլսեր, իսկ կան միայն մի քանի գյուղեր, որոնց բնակիչները ծխախոտամշակությամբ կը պարապին:... Նաև ավազակներու երկյուղից տներն իրարու մոտ շինած են»¹:

Վերոնշյալ ձևով բնակեցման պատճառները, կարծում ենք, հետևյալն են.

ա. Տեղավայրի կտրտվածությունը և թշնամու համար անմատչելիությունը, սասունցիների՝ դարավոր պայքարով ձեռք բերված կիսանկախ վիճակը, հետևապես կենցաղային ինքնապաշտպանության սակավ անհրաժեշտությունը:

բ. Տնամերձ հողամասին կից տուն կառուցելու սովորությունը՝ մշակվող հողին մոտիկ լինելու, այն աղբին դարձնելու կամ սահմանափակ թվով անասուններն այդտեղ արածեցնելու նկատառմամբ:

գ. Խամահատահրկիզային երկրագործությամբ զբաղվելու ավանդական սովորույթի կիրառումը:

դ. Երկրագործության համեմատ անասնապահության առավել եկամտաբեր լինելը, ուստի և արոտավայրերի և անտառների որոշ մասն ընտանիքների վրա բաժանելը, հետևապես անասնակերի աղբյուրները տներին մոտեցնելը:

Լեռնային շրջաններում (օր.՝ Սասուն) այնպիսի տեղերում էին հիմնվում գյուղերը (ձորաբերաններին, գետափներին, անառիկ դիրքով ձորամեջերում, լեռների ստորոտներին), որ անմատչելի լինեին հակառակորդների համար և պաշտպանեին ձմեռային հուսիսից (ձյան հոսք): Երբեմն լեռների մեջ խրված բնակավայրերը բերդի տպավորություն էին թողնում: Վանա լճի առափնյա գյուղերից մեկի տների վերաբերյալ ուշագրավ նկարագրություն է թողել Րաֆֆին. «Կտուրը, որի վրա նստած էինք մենք, իր բարձրությամբ հագիվ որոշվում էր գետնի մակերևույթից, որովհետև տունը գետնափոր էր և մտել էր լեռան կողքի մեջ, որը զառիվայր դիրք ուներ: Գյուղի բոլոր տները այդ դիրքով էին շինված, մեկի կտուրը մյուսի բակն էր կազմում, և այսպես աստիճանաբար իջնում էին ցած, մինչև ձորի խորքը: Եթե ներքևից մարդ նայելու լիներ դեպի լեռան զառիվերը, կտեսներ, որ տները, միմյանց վրա շարված լինելով, ներկայացնում են մի սանդուղք, որ նույնպես աստիճանաբար բարձրանում է մինչև սարի կատարը: Ինձ շատ անգամ էր պատահել տեսնել, որ լեռնային շրջաններում համարյա բոլոր գյուղերի համար ընտրել էին այսպիսի անհարմար և անմատչելի տեղեր: Մշտական երկյուղը ստիպել էր խույս տալ հարթ դաշտերից և հովիտներից»²: Այսպիսի լանջերին, ինքնապաշտպանության տեսակետից ապահով բնակավայրերում սայլի բացակայության և անասնակերի ու օրանի տեղափոխման դժվարությունների պատճառով գոմերը և մարագները, երբեմն նույնիսկ **կալտունն** ընկած էին գյուղից ոչ շատ հեռու՝ արտերի եզրին, **սաթառների** (անտառ) մոտ՝ արտերը պարարտացնելու և թավ (ծառերի դալար ճյուղեր և տերևներ) անասնակերին մոտ լինելու համար:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Աղձնիքում բնակավայրը կառուցվածքային առումով բաժանվում էր երեք հիմնական մասի. ա) բուն կամ բնակեցված՝ բնակելի, տնտեսական, արտադրական պաշտամունքային շինություններն ընդգրկող, բ) դրան մերձակա, մշակութապես յուրացված տարածք, և գ) բնակավայրից հեռու՝ անասնակեր սաթառներին, խոտհարքներին, արտերին ու կալերին հարող **մզրաներ**՝ հիմնական բնակավայրի առանձին ընտանիքներին պատկանող գոմեր, ախոռներ՝ խնամատար, գերդաստանի մի մասը կազմող

¹ Տե՛ս «Արարատ» (ամսագիր), 1905, հ. Է-Ը, էջ 728:

² Տե՛ս Րաֆֆի, Երկեր, հ. 5, Երևան, 1956, էջ 330:

մարդկանցով հանդերձ, մարագներ, կալեր, կալտուն, որոնք հետագայում միտում ունեին վերածվելու հիմնական բնակավայրի և ստանում էին հիմնադիր ընտանիքի անվանումը:

Բնակավայրի հիմնական բաղադրիչներն էին՝ ա) կենտրոնը, բ) թաղը, գ) բնակելի և այլ շինությունների միջև ընկած տարածքը, դ) տնտեսական, արտադրական նշանակության կառույցները՝ դարբնոցը, ջրաղացը, ձիթհանը և այլն, տնամերձ և հեռավոր մշակելի հողահանդակները, արտավայրերը, անտառները, պաշտամունքային կառույցներն ու կոթողները, ե) գերեզմանատունը:

Կենտրոնի դեր է կատարել բնակավայրերի աղբյուրին հարող, կենտրոնում որևէ մեկի տան ետնամասի բաց, հրապարակ ունեցող տարածքը, եկեղեցու բակը, երկու-երեք հիմնական փողոցների խաչմերուկը, բնակավայրի համայնքային հյուրընկալման օդայի շրջակա տարածքը: Բնակավայրերի կենտրոնը համայնքի համար սոցիալական կարևոր դեր ուներ. այն տարեց տղամարդկանց հավաքավայր էր, տնտեսական, սոցիալական, ինքնապաշտպանական խնդիրների շուրջ հանրությանը հուզող կարծիք և վճիռ կայացնող վայր էր: Իսկ գյուղական աղբյուրն ունեցել է կենցաղային և հասարակական կարևոր նշանակություն: Այն գերազանցապես երիտասարդ կանանց և արբունքի շրջանի աղջիկների հասարակական ճանաչման կարևոր վայր էր, ինչպիսին բաղնիքներն էին քաղաքներում:

Բնակավայրի՝ իբրև սոցիալական միավորի կարևորագույն նշանակություն ուներ թաղը, որը, տեղանքով պայմանավորված, համայնքային հարաբերությունների յուրատեսակ համակցում էր: Ինքնապաշտպանական նկատառումներով պայմանավորված՝ Աղձնիքում առավել կայուն ու միասնական են պահպանվել ազգակից ընտանիքների ոչ միայն տարածքային, այլև գաղափարական, տնտեսական կապերը:

Ամեն թաղ ուներ ազգատոհմի նահապետի գերդաստանական տան համալիրի օդա-հյուրանոցը, որը թաղակից ազգակիցների համար օտար հարկահանների, անցանկալի «հյուրերի» դիմավորման, նրանց բռնություններից խուսափելու, համայնքային եղանակով նրանց դիմավորումն իրականացնելու, նաև յուրահատուկ կերպով ազգակիցներին մտերմացնելու, զորավիգ լինելու դաստիարակչական, մշակութային կենտրոնի դեր էր խաղում:

Ավանդութային հասարակական կենցաղի ուսումնասիրության համար որպես օբյեկտ օրինաչափ է առանձին բնակավայրերի, գյուղական հասարակության ընտրությունը:

Այսպիսով՝ պատմագրական և դաշտային ազգագրական նյութերի համալիր ուսումնասիրությամբ փորձ է արվել բացահայտել XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբներին պատմական Աղձնիքի գյուղական բնակավայրերի երկու տիպերը՝ հարթավայրային՝ գերազանցապես դաշտավարական, և լեռնային՝ գերազանցապես խաշնարածային տնտեսավարմամբ: Հարթավայրային բնակավայրերը գոյացել էին խիտ բնակեցմամբ ազգակցական և հարևանական թաղերի համակցումից, որոնց հատուկ էին կծկվածությունը, կլորության ձգտելը, յուրատեսակ ռազմական ամրոցի վերածվելը, ինչը հիմնականում առնչվել է գերդաստանական ընտանիքների ճյուղավորմանը, ազգակցական և համայնքային համագործակցությանն ու համատեղ ինքնապաշտպանությանը: Կցաթաղերից գոյացած բնակավայրերի կտուրները դարեր շարունակ ծառայում էին տնտեսական ու արտադրական վայրեր, անցուղիներ, ժողովատեղիներ, երեխաների խաղահրապարակներ և ընտանեկան ու համայնքային այլ միջոցառումներ կազմակերպելու հրապարակներ: Թաղերի կից լինելը նպաստել էր նաև հաղորդակցումը ոչ ուրացնելուն: Ազգակից և հարևան տների ներսից, միմյանց կապող միջնապատերից տարբեր մեծության նեղլիկ դռներ կամ պատուհաններ՝ **շքակներ** էին թողնվում, որոնք ծառայում էին հարևանական մտերիմ կապերին, իրեր փոխանակելուն, տխուր և շտապ միջոցառումներ պահանջող գործողություններ իրականացնելուն, ամբողջ համայնքի ինքնապաշտպանությանը զորավիգ լինելուն:

Աղձնիքի բարձր լեռնային վայրերում հատկանշական է եղել գյուղական տների ցրվածությունը, որտեղ հարևանական կցաթաղային համակարգն իսպառ բացակայել է: Գերդաստանական տները հարևաններից բավական հեռու են հիմնվել, ուստի տոհմական անվանումներով առանձին բնակավայրեր՝ **մզրաներ** (ազարակներ) են առաջացրել: Այդպիսին

Էին հատկապես Սասնա բնակավայրերը: Սասունին բնորոշ էր տների ցրվածությունը՝ լեռնային անմատչելի տեղանքի և բնակչության՝ մշտապես ինքնապաշտպանության վարժված լինելու հանգամանքով պայմանավորված, ինչը արձանագրված է նաև միջնադարյան պատմագիրների կողմից:

Եզրակացություն

Յեղիևակը պատմագրական և հիմնականում իր գրառած դաշտային ազգագրական նյութերի համալիր հետազոտությամբ բացահայտել է Աղձնիք նահանգի հայ բնակչության բնակավայրային համալիրների մի շարք յուրահատուկ կողմեր:

ա) Չայկական գյուղը Աղձնիքում մինչև Չայոց ցեղասպանությունն ու հայաթափ լինելը պահպանել էր ազգակցական թաղամասերով և անգամ մեկ ազգատոհմով առանձին բնակավայրում բնակեցման հնավանդ սովորույթը, որ թելադրված էր սոցիալ-տնտեսական և պաշտպանական նկատառումներով: Ուստի, բնակավայրի բնորոշ հատկանիշներից մեկը բնակարանային համալիրների համախմբվածությունն էր մեկ ընդհանուր կտուրի տակ, որով գյուղերի հատակագիծը ձգտել էր կլորության:

բ) Դարեր շարունակ ոչ միայն այս տարածաշրջանը, այլև գրեթե ողջ պատմական Չայաստանը եղել է օտար ասպատակիչների, նվաճողների արշավուղիների խաչմերուկ, որի պատճառով հայկական բնակավայրերը պաշտպանական նկատառումներով սեղմվել, ճնշվել և կուչ էին եկել, շատ հաճախ փակվել, նեղացել էին գյուղամիջյան անցուղիները:

գ) Գյուղական բնակավայրերը միմյանց կպած, ներսից և դրսից իրար հետ կապված տների համալիրներ էին, որոնց կտուրները վերածվել էին անցուղիների, կոլեկտիվ աշխատանքների, ժողովատեղիների, հանդիսությունների հրապարակների:

դ) Ինքնապաշտպանության կազմակերպման և ասպատակիչների թալանից ու արժանապատվության ոտնահարումից խուսափելու համար հարկադրված են եղել անցանկայինների՝ հաճախ կրկնվող «հյուրընկալումը» իրականացնելու համար համայնքային առանձնացված օդահյուրանոցներ կառուցել:

ե) Այստեղ երկար, գրեթե անխաթար պահպանվել է ազգատոհմերով, գերդաստանական ընտանիքներով համատեղ բնակվելու սովորույթը, որը հաճախ հանգեցրել է ազգատոհմային բնակավայրերի առաջացմանը:

զ) Մայր բնակավայրերից առանձնացած այս մզրանները հայտնի էին տոհմական անվանումներով: Ցրված տներով բնակեցումը, որ արձանագրված է նաև միջնադարյան պատմագիր Թովմա Արծրունու հավաստմամբ, պայմանավորված է եղել տեղանքի կտրտվածությամբ, անմատչելիությամբ, անտառահատական եղանակով մշակելի հողատարածքներ ունենալու, անասունների գոմաղբով արտերը պարարտացնելու, արոտավայրերին, ձմեռային անասնակերին մոտ լինելու, բեռների փոխադրության գրեթե անհնարինությունը բացառելու և այլ հանգամանքներով:

Рафик Напетян, ОБ ИЗУЧЕНИИ ЖИЛЫХ КОМПЛЕКСОВ АГДЗНИКА (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В. И НАЧАЛО XX В.). Статья посвящена изучению жилых комплексов армянского населения исторической провинции Агдзник. Автор, посредством комплексного исследования историографических и в основном записанных им полевых этнографических материалов, раскрыл ряд своеобразных сторон предмета исследования.

а) Армянское село в Агдзнике до Геноцида и исхода армян сохраняло древний обычай заселения родственными кланами и даже всем родом в отдельном населённом пункте, что было продиктовано социально-экономическими и оборонительными соображениями. Следовательно, одним из характерных свойств населённого пункта была сплочённость жилищных комплексов под одной общей крышей, тем самым план сёл стремился к округлости.

б) На протяжении веков не только этот регион, но и почти вся историческая Армения была перекрёстком путей движения чужеземных захватчиков, из-за чего армянские

населённые пункты из оборонительных соображений сжимались, подавлялись и скомкывались, очень часто закрывали, сужали сельские тропинки.

в) Сельские населённые пункты представляли как прилегающие друг другу, связанные друг с другом изнутри и снаружи комплексов домов, крыши которых превращались в тропинки, площадки для коллективных работ, собраний, торжеств.

г) Для организации самозащиты и во избежание грабежа и оскорбления достоинства со стороны захватчиков, были вынуждены строить для часто повторяющегося «гостеприимства» путников обособленные общинные гостиницы на воздухе.

д) Здесь долго, почти неизменно сохранялся обычай совместного проживания семьями рода, что очень часто приводило к возникновению родовых населённых пунктов.

е) Эти ответвления, обособленные от основных населённых пунктов, были известны родовыми наименованиями. Проживание разрозненными домами, что констатировано также свидетельством средневекового историографа Товма Арцруни, было обусловлено разрозненностью местности, недоступностью, необходимостью иметь земельные участки при лесе, удобрения полей навозом животных, быть ближе к пастбищам, зимнему корму для скота, исключению почти невозможности перевозки грузов.

Ключевые слова: источеский Агдзник, Сасун, горный населённый пункт, родовые населённые пункты, жилищные типы, родственные кварталы, самооборона.

Rafik Nahapetyan, ON STUDYING OF RESIDENTIAL COMPLEXES OF AGHDZNIK (THE SECOND HALF OF THE 19TH CENTURY AND THE BEGINNING OF THE 20TH CENTURY). The article is devoted to the study of residential complexes of the Armenian population of the historical province of Agdznik. The author, through a comprehensive study of historiographic and mainly field ethnographic materials recorded by him, revealed a number of peculiar aspects of the subject of research.

a) Before the Genocide and the exodus of the Armenians, the Armenian village in Agdznik preserved the ancient custom of settling by kindred clans and even the whole family in a separate settlement, which was dictated by socio-economic and defensive considerations. Consequently, one of the characteristic features of the settlement was the cohesion of housing complexes under one common roof, thus the village plan strove for roundness.

b) For centuries, not only this region, but almost all of historical Armenia was a crossroad for the movement of foreign invaders, because of which the Armenian settlements for defensive reasons were compressed, suppressed and crumpled, very often closed, narrowed rural paths.

c) Rural settlements appeared as adjoining to each other, connected to each other from the inside and outside of the complex of houses, the roofs of which turned into paths, sites for collective work, meetings, celebrations.

d) For the organization of self-defense and in order to avoid robbery and insult by the invaders, they were forced to build for the often repeated "hospitality" of travelers, isolated communal hotels in the air.

e) Here for a long time, almost invariably, the custom of cohabitation by families of a clan persisted, which very often led to the emergence of clan settlements.

f) Living in scattered houses, which is also stated by the testimony of the medieval historiographer Tovma Artsruni, was due to the fragmentation of the terrain, inaccessibility, the need to have land plots near the forest, fertilize fields with animal dung, be closer to pastures, winter feed for livestock, the exclusion of the almost impossibility of transporting goods.

Keywords: historical Agdznik, Sasun, mountain settlement, tribal settlements, housing types, related quarters, self-defense.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 1

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան
խմբագիր՝ Միքայել Մալխասյան
Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Արմեն Մալխասյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Արովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Արովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 200